ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄՈՎՍԵՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Ժողովրդավարությունը և հասարակության ժողովրդավարացման գործընթացը հասարակագիտական հետազոտությունների շրջանակներում վերջին տասնամյակներում ամենաքննարկվող հարցերից են: Դա պայմանավորված է, մի կողմից, գլոբալացմամբ, որի ազդեցության հետևանքով ավանդական հասարակություններում սկիզբ են առնում արդիականացման գործընթացներ, որոնց քաղաքական և քաղաքացիական տեսանկյունն անհնար է պատկերացնել առանց կառավարման և սոցիալական հարաբերությունների համակարգերի ժողովրդավարացման, իսկ մյուս կողմից՝ տվյալ հասարակության բնականոն զարգացման այն մակարդակով, որում արդեն հանրային կապերի և հարաբերությունների ամբողջությունն ապահովելու համար անհրաժեշտ է ավելի մեծ թվով մարդկանց և սոցիալական խմբեր ներգրավել որոշումների ընդունման գործընթացում: Ակնհայտ է, որ ժողովրդավարությունն առավել մեծ չափով արմատավորվում է այնտեղ, որտեղ կա կայուն կապ պետության և քաղաքացիական հասարակության միջև: Քաղաքացիների ակտիվ մասնակցությունը քաղաքական և քաղաքացիական ամենատարբեր գործընթացներում և որոշումների ընդունման վրա նրանց ազդեցության հնարավորությունը այն գործոններ են, որոնք թույլ են տալիս տարբերել իրական ժողովրդավարությունը ձևականից: Այս իմաստով կարևոր նշանակություն ունի քաղաքացիական հասարակության ժողովրդավարական գործառույթների ուսումնասիրությունը, հատկապես եթե հաշվի առնենք այն, որ ժողովրդավարությունը՝ որպես կառավարման համակարգ, ուսումնասիրված է ավելի շատ, քան հասարակության ժողովրդավարացման գործընթացը:

Ամենաընդհանուր ձևակերպմամբ՝ ժողովրդավարացումը այն քաղաքական և սոցիալական փոփոխությունների ամբողջությունն է, որ ուղղված է մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների ընդունմանը և պահպանմանը, որոշումների ընդունման գործընթացներում քաղաքացիների առավել մեծ չափով ներգրավվածությանը և ավանդական հասարակության փոխակերպմանը: Վերջինիս նպատակն է ստեղծել այնպիսի սոցիալական իրականություն (կեցություն), որում

մարդու կյանքի կազմակերպման **ավանդական ձևերը**՝ համայնքը, ավանդույթը, սովորույթները և այլն, իրենց տեղը զիջեն **սոցիալ-մշակութային առավել ժամանակակից մոդելին, որի կենտրոնում անհատն է**, ոչ թե մարդուց վեր դասվող բարոյական, ավանդական կամ կրոնական վերացական նորմը:

Նման ձևակերպումը թեպետ բավականին լայն է և հայտնի իմաստով դուրս է գալիս զուտ քաղաքագիտական ուսումնասիրության շրջանակից՝ ներառելով հարցի նաև փիլիսոփայական, մշակութաբանական և այլ տեսանկյուններ, սակայն արդարացված է այնքանով, որ թույլ է տալիս չսահմանափակվել ժողովրդավարության՝ միայն որպես ընտրական գործընթացի կամ առհասարակ քաղաքական գործընթացներում հասարակության մասնակցության կազմակերպման մոդելի ընկալմամբ, ինչը մասնագիտական գրականության մեջ բավականին տարածված միտում է[1]:

Առհասարակ ժողովրդավարության նեղ ընկալումները տարածված են հետազոտողների շրջանում այն պատճառով, որ դրա շնորհիվ հնարավոր է լինում **չափելի** դարձնել ժողովրդավարության աստիճանը կամ հասարակության ժողովրդավարացման մակարդակը: Օրինակ, զուտ ընտրական գործընթացները կամ մարդու իրավունքների պաշտպանությունը ոլորտներ են, որտեղ կարելի է իրականացնել ժողովրդավարության **էմպիրիկ** հետազոտություն, ինչը, միևնույն ժամանակ, չի արտացոլում ժողովրդավարության անհրաժեշտ և հնարավոր բոլոր դրսևորումները: Լայն իմաստով ժողովրդավարությունը ներառում է ոչ միայն քաղաքական գործընթացներին մասնակցելու իրավունքը, այլև այդ մասնակցության հավասարության ապահովումը, իշխանության հանրային վերահսկողության մեխանիզմների կիրառումը և այլն:

Մյուս կողմից, ժողովրդավարության ինստիտուտների գոյությունը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է հասարակության ժողովրդավարացման համար, թեպետ ժամանակակից քաղաքագիտության մեջ ընդունված է ժողովրդավարության ինստիտուտների հենց միայն գոյությունը դիտարկել որպես անցում ամբողջատիրական կամ բռնապետական կառավարման ձևից ժողովրդավարականի:

Խնդիրն այն է, որ հասարակության ժողովրդավարացման ընթացքը և ժողովրդավարության ինստիտուտները կարող են համատեղ գոյություն ունենալ և լրացնել միմյանց, սակայն հնարավոր է նաև այնպիսի իրավիճակ, երբ դրանց միջև առաջանա հակամարտություն: Օրինակ, ժողովրդավարության ինստիտուցիոնալացման գործընթացը կարող է խաթարել հասարակական հարաբերությունների ժողովրդավարացումը ձևայնացման միջոցով: «Եթե ժողովրդավարական գործընթացներից դուրս է մղվում քաղաքացիների անմիջական մասնակցութ-

[1] Տե՛ս, օրինակ, **Schumpeter J.** Capitalism, Socialism and Democracy. London. George Allen & Unwin, 1976:

յունը, ապա գործնականում հնարավոր չէ պարզել, թե այս կամ այն երկրի պետական կարգը ժողովրդավարական է, թե ոչ, որովհետև վերանում է գլխավոր չափանիշը, որը թույլ կտար տարբերել բուն ժողովրդավարական գործընթացը ձևական արարողակարգից, համակարգված ուղղորդումից և կառավարվող համաձայնությունից»[2]:

Ժողովրդավարացման ուսումնասիրության կարևոր բաղադրիչ է հասարակության մեջ այսպես կոչված **ակտորների՝** քաղաքականապես ակտիվ ազդեցիկ սուբյեկտների որոշակիացումը: Այս համատեքստում երբեմն հաշվի են առնվում միայն քաղաքական կառույցները, և ուշադրությունից դուրս են մնում հասարակական կազմակերպությունները, ինչը մեթոդաբանական առումով ճիշտ չէ, որովհետև վերջիններս նույնպես սոցիալական քաղաքականության սուբյեկտներ են: Այս խնդիրն առաջանում է այն պատճառով, որ քաղաքագիտության համար առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում հիմնականում **հանրային քաղաքական գործընթացների** ժողովրդավարացումը և ոչ թե հասարակական կյանքի արդիականացումն առհասարակ[3]: Մինչդեռ, օրինակ, նույն հարցի սոցիալ-փիլիսոփայական հետազոտությունը չի կարող շրջանցել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ժողովրդավարացման տարբերությունները ավանդական և քաղաքացիական սոցիոմշակութային համակարգերում, քաղաքական մասնակցության մոտիվացիան, մարդու քաղաքական և քաղաքացիական կեցությունների առնչությունները ժողովրդավարացման գործընթացին, առօրեական մարդու քաղաքական ակտիվությունը, արդարության և ազատության հանրային ընկալումները և այլն: Դրանք բոլորը տարբեր երկրներում հասարակության ժողովրդավարացման վրա իրական ազդեցություն ունեցող երևույթներ են, որոնց ուսումնասիրությունն առավել արդիական է հետխորհրդային տարածքի պետություններում ժողովրդավարության հաստատման յուրահատկությունները հասկանալու առումով:

Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել հասարակության ժողովրդավարացման կարևոր մի քանի գործընթացներ, որոնք քիչ թե շատ, բայց տեղ են գտնում արդիականացման ժամանակ:

- Իշխող ռեժիմի անտեսման կամ շրջանցման ճանապարհով այլընտրանքային կամ զուգահեռ սոցիալական իրականության կառուցում, ինչի հնարավորությունը ուղիղ համեմատական է իշխանության ոչ ժողովրդավար բնույթին. որքան ավելի քիչ ժողովրդավար է իշխանությունը, այնքան ավելի փոքր է այլընտրանքային սոցիալական իրականության կառուցման հնարավորությունը: Թերևս սա է պատճառը, որ այս օ-

---

[2] **Коэн Дж., Арато Э.** Гражданское общество и политическая теория. М.: "Весь мир", 2003, с. 28-29.

[3] Տե՛ս **Карл Т. Л., Шмиттер Ф.** Демократизация: концепты, постулаты, гипотезы (Размышления по поводу применимости транзитологической парадигмы при изучении посткоммунистических трансформаций) // "Политические исследования", 2000, № 4, էջ 6-27:

ինաչափությունը գրեթե բացառված էր Խորհրդային Միության տարիներին՝ հաշվի առնելով ամբողջատիրության բարձր մակարդակը:

- Դիմադրություն բռնապետությանը կամ ամբողջատիրական ռեժիմին, ինչը նկատելի էր մի շարք երկրներում Խորհրդային Միության փլուզմանը հաջորդած առաջին տարիներին, երբ քաղաքական թատերաբեմում հայտնվեցին անկախ խմբեր և շարժումներ, որոնց նպատակն էր հետխորհրդային տարածքում կիրառել եվրոպական երկրների փորձը:
- Քաղաքական նոր ակտորների ձևավորում, որոնց պարագայում հետխորհրդային որոշ երկրներում դրսևորվեց մի նոր օրինաչափություն: Ժողովրդավարացման եվրոպական փորձը վկայում է, որ նոր ակտորները, սերելով քաղաքացիական նախաձեռնություններից և խմբերից, ժամանակի ընթացքում դառնում են նաև քաղաքական լուրջ դերակատարում ունեցող ուժեր, մինչդեռ որոշ դեպքերում ստացվեց այնպես, որ նրանք չկարողացան կամ չցանկացան ստանձնել քաղաքական պատասխանատվություն երկրի ապագայի համար և մնացին քաղաքացիական ոլորտում՝ ձեռք չբերելով քաղաքական ազդեցություն: Դա պայմանավորված է մի հանգամանքով ևս. բոլոր այդ երկրներում կայացած չէր ոչ միայն անկախ քաղաքական գործունեության համակարգը, այլև քաղաքացիական հարաբերությունների ինստիտուտը, և նոր ակտորները, այսպես ասած, «դեռևս պահանջված էին» հենց քաղաքացիական հարաբերությունների ոլորտում:
- Իշխանության չարաշահման դեպքերի բացահայտում և կանխում, ինչը շատ պահանջված էր հետխորհրդային երկրների մեծ մասում՝ հաշվի առնելով հանրային վերահսկողության հնարավորության բացակայությունը, իշխանության գործելաոճում կլանային մտածողությունը, օրենսդրական բացերը և այլն: Սակայն, ունենալով սոցիալական մեծ պահանջարկ, այս գործառույթն ամբողջությամբ չիրացվեց, որովհետև քաղաքացիական հասարակության նոր ակտորներն առավել մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում սոցիալական, այլ ոչ թե քաղաքական ոլորտն արդիականացնելու հարցի նկատմամբ: Դա պայմանավորված է նրանով, որ քաղաքացիական նոր ակտորների ապաքաղաքական գործունեությունը հիմնականում ընդունելի է լինում իշխանության կողմից և իր հերթին ֆինանսավորվում է միջազգային կազմակերպությունների դրամաշնորհներով: Միևնույն ժամանակ վերջիններս միշտ չէ, որ կարող են ֆինանսավորել քաղաքական գործունեություն իրականացնող մարդկանց:
- Հանրային շահերի, հետաքրքրությունների և նպատակների ձևակերպում և ներկայացում, ինչը հետխորհրդային տարածքի երկրներում կրկին ոչ շատ տարածված գործելաոճ է: Դա պայմանավորված է նրանով, որ հետխորհրդային տարածքում դեռևս նկատվում է քաղաքացիական նախաձեռնություններում լայն հասարակայնության ներ-

գրավվածության բավականին ցածր մակարդակ, ինչի հետևանքով մարդկանց շահերը, հետաքրքրությունները և նպատակները համարժեքորեն չեն արտահայտվում քաղաքացիական և քաղաքական օրակարգերում:

- Քաղաքական մասնակցության աճ, ինչը երբեմն մեկնաբանվում է որպես ժողովրդավարացման ձեռքբերում, մինչդեռ միշտ չէ, որ կարող է վկայել դրա մասին այն պարզ պատճառով, որ սոցիալ-քաղաքական հարաբերությունների ակտիվությունը կարող է ունենալ նաև հակաժողովրդավարական (օր.՝ ծայրահեղ ազգայնական) ուղղվածություն:

Նշված օրինաչափությունները դրսևորվել են նաև հայ հասարակության արդիականացման ընթացքում՝ «համեմված» տեղային առանձնահատկություններով, որոնցից հարկ է առանձնացնել հասարակության մոնոէթնիկ կազմը, անվտանգության հիմնախնդիրը, կյանքի կազմակերպման մեջ ավանդույթի և սովորույթի մեծ ազդեցությունը, ազգային ինքնության կորստի վտանգը և այլն: Այս ամենն իր հետքն է թողնում հասարակության ժողովրդավարացման վրա՝ ծնելով հիմնահարցերի լուծմանն ուղղված սոցիալ-քաղաքական հայեցակարգեր՝ սկսած «ազգային անցյալի» մեջ ներփակվելու անիրատեսական մոտեցումից, վերջացրած արևմտյան պատրաստի փորձն ընդօրինակելու նույնքան անհեռատեսական սկզբունքով:

Ակնհայտ է, որ նշված երկու ծայրահեղությունները գրեթե բացառում են ժողովրդավարացման համար **կենսական** նշանակություն ունեցող **քաղաքացիական հասարակության** ձևավորումը: Մինչդեռ վերջինիս կապը ժողովրդավարացման հետ կարևոր է նաև այնքանով, որ լուծում է առնվազն երկու խնդիր. նախ՝ քաղաքացիական ակտորների քաղաքական համակարգ ներթափանցումից հետո չի կորչում նրանց կապը քաղաքացիական հասարակության հետ, ինչը ժողովրդավարացման ամենաիրատեսական ռիսկերից մեկն է, և երկրորդ՝ նույնիսկ եթե հասարակության ժողովրդավարացման գործընթացը սկիզբ առնի ոչ թե քաղաքացիական նախաձեռնություններից (ներքևից), այլ իշխանության կողմից (վերևից), ապա այն չի կարող դառնալ հասարակության ամենօրյա **կենսակերպ** քաղաքացիական հասարակության բացակայության պայմաններում[4]: Առավել ևս, որ ժողովրդավարացումը վերաբերում է ոչ միայն հասարակությանը, այլև պետությանը և իշխանությանը, առանց որոնց համարժեք ժողովրդավարացման՝ խախտվում է իշխանության և հասարակության միջև հավասարակշռությունը:

Ժողովրդավարացման համար քաղաքացիական հասարակությունը մեծ կարևորություն ունի նաև այն պատճառով, որ, լինելով հասարակության ինքնակազմակերպման արդյունք, միևնույն ժամանակ դառնում է պարարտ հող ժողովրդավարացման հետևանքների ամ-

[4] Այդ մասին մանրամասն տե՛ս **Баранов Н. А.** Современная демократия: эволюционный подход. СПб., 2007:

բապնդման համար և ձևավորում է ժողովրդավարացման գործընթացի շարունակականության ապահովման հանրային պահանջ[5]: Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ ժողովրդավարացման գործընթացն ամենայն հավանականությամբ անվերջ է, քանի որ ժողովրդավարությունը երբեք չի կարող ամբողջովին ինստիտուցիոնալացվել: Միշտ կլինեն հասարակության անդամներ՝ անհատներ և խմբեր, որոնք դուրս կմնան քաղաքական և քաղաքացիական ակտիվ հարաբերություններից, ինչը համարվում է բացթողում ներկայացուցչական ժողովրդավարության տեսանկյունից, բացի այդ, ուղիղ ժողովրդավարության «տեսադաշտից» դուրս են մնում բոլոր նրանք, ովքեր մասնակցում են երկրի քաղաքական կյանքին միջնորդավորված ձևով և այլն: Մյուս խնդիրն այն է, որ մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների կիրառումը չի կարող մեկանգամյա գործողություն լինել, քանի որ, ելնելով հասարակության առանձնահատկություններից և դրանում առկա հիմնահարցերի հանրային քննարկման բովանդակությունից, միշտ առաջանում է անհրաժեշտություն վերահիմաստավորելու, վերաարժևորելու այս կամ այն իրավունքը և ազատությունը (օրինակ, էֆթանազիայի օրինականացման հարցը, որը ոչ այնքան իրավական կարգավորման կարիք ունի, որքան, նախևառաջ, փիլիսոփայական՝ հիմնվելով կյանքի իրավունքի և ընտրության ազատության փիլիսոփայական ու բարոյագիտական իմաստավորման վրա):

Այս ամենը առիթ է դարձել, որ մի շարք հետազոտողներ առաջ քաշեն «ժողովրդավարության դեֆիցիտի»[6] և «ժողովրդավարության ակնկալիքների»[7] հայեցակարգերը, որոնցից բխող իրավիճակներից շատերը նկատելի են նաև ժամանակակից հայ հասարակությունում: Ըստ Բեշլերի՝ ժողովրդավարության դեֆիցիտը դրսևորվում է երկակի: Մի կողմից դա ժողովրդավարության իդեալի և իրականության միջև հակասության արդյունք է, իսկ մյուս կողմից պայմանավորված է տվյալ հասարակության ժողովրդավարացման այս պահի ներուժով: Ժողովրդավարական կարգերի այսպես կոչված «ուշացումը» հեղինակը բացատրում է նախորդ իշխանության թողած ոչ ժողովրդավարական ժառանգությամբ, կայացած տնտեսական հարաբերությունների համակարգով և նոր իշխանության խոստումների կատարման համար անհրաժեշտ ռեսուրսների սակավությամբ: Ժողովրդավարության իդեալը ենթադրում է, որ բոլոր ռեսուրսները պետք է բաշխվեն ոչ թե հավասարության, այլ արդարության սկզբունքով, սակայն ակնհայտ է, որ իրականում հնարավոր է բաշխումը կատարել միայն հավասարության չափանիշով, քանի որ գրեթե անհնար է ձևավորել արդարության այնպիսի

[5] Տե՛ս **Гайнутдинова Л. А.** Демократические функции гражданского общества. // "Известия Российского государственного педагогического университета им. А. И. Герцена". 2009, № 97, էջ 315-323:

[6] **Бешлер Ж.** Демократия. Аналитический очерк. М., 1994.

[7] Մեջբերումն ըստ՝ **Баранов Н. А.,** նշվ. աշխ., էջ 175:

ըմբռնում, որն ընդունելի լինի հասարակության բոլոր անդամների համար: Ակնհայտ է՝ նման իրավիճակում է հայտնվել նաև ժամանակակից հայ հասարակությունը, որտեղ թավշյա իշխանափոխությունից հետո արձանագրվում է ժողովրդավարության ու խոսքի ազատության դեֆիցիտ ԶԼՄ-ներում, տեղական ինքնակառավարման մարմինների և երկրի քաղաքական իշխանության միջև հարաբերություններում, սոցիալական արդարության հաստատման հարցում և այլն: Հայաստանի պարագայում սա նույնպես պայմանավորված է նախորդ իշխանության թողած ոչ ժողովրդավարական ժառանգությամբ, իսկ առավել մեծ չափով՝ իշխանափոխությամբ պայմանավորված ակնկալիքների բարձր շեմի, ժողովրդավարության իդեալի և մյուս կողմից՝ սոցիալական իրականության միջև խոր անհամապատասխանությամբ:

Ըստ ժան Բեշլերի՝ փոխակերպվող հասարակությունները գործ ունեն ոչ միայն ժողովրդավարության դեֆիցիտի, այլև ժողովրդավարության խեղաթյուրումների հետ: Դրանք լինում են քաղաքական, գաղափարական և բարոյական: Քաղաքական խեղաթյուրման հիմքն այն է, որ հնարավոր չէ չեզոքացնել անհատականի և հասարակականի, պետականի և մասնավորի միջև հնարավոր հակասությունները, ինչը հանգեցնում է նրան, որ «քաղաքական շուկան լեգիտիմացնում է անազնիվ խաղը»[8]:

Գաղափարական խեղաթյուրումն առաջանում է այն պատճառով, որ ժողովրդավարության հիմնական դրույթները սկզբունքորեն կարելի է մեկնաբանել տարբեր կերպ, իսկ այլաբանությունը տվյալ դեպքում հանգեցնում է ժողովրդավարացման համար վտանգավոր սոցիալական հետևանքների: Առավել մեծ խեղաթյուրման են ենթարկվում երկու սկզբունքներ՝ «իշխանությունը պատկանում է ժողովրդին» և «ժողովրդավարությունը մեծամասնության իշխանությունն է»: Առաջին դրույթն իրական ժողովրդավարության խեղաթյուրում է այնքանով, որքանով սովորաբար ժողովուրդը ներկայանում է ժողովրդավարական գործընթացներում ոչ թե ինքնին, այլ ներկայացուցիչների միջոցով, որոնք երբեք չեն համընկնում ժողովրդի հետ: Երկրորդ՝ «ժողովրդավարությունը մեծամասնության իշխանությունն է» դատողությունը այն իրողության խեղաթյուրված ընկալումն է, երբ քաղաքական գործընթացներին մասնակցում են ոչ թե շատ մարդիկ, այլ առավել ակտիվ մարդիկ, որոնք, իրենց հերթին, հատկապես զանգվածային լրատվամիջոցների օգնությամբ ստեղծում են մեծամասնության անունից հանդես գալու տպավորություն: Սա սոցիալական մյուս խմբերին «ժողովրդավարության պաշտպանի դիրքերից» ճնշելու և ուղղորդելու մեծ վտանգ է պարունակում:

Բարոյական խեղաթյուրումները կապված են ազատության և իրավունքի չարաշահումների, կամայական մեկնաբանությունների, ավանդականը հնի տեղ ներկայացնելու և մանիպուլյացիոն բնույթի այլ

[8] Նույն տեղում, էջ 173:

հնարքների հետ, որոնք տեսանելի չեն մեծամասնության համար, բայց ունեն մարդկանց սոցիալական վարքն ուղղորդելու մեծ ներուժ:

Նորբերտո Բոբիոյի «ժողովրդավարության ակնկալիքների» մասին հայեցակարգի շրջանակներում քննարկվում է այն հարցը, որ պատմական փորձը վկայում է նախընտրական խոստումների և դրանց հետևանքով ձևավորված հանրային սպասումների անիրականանալի բնույթի մասին: Բանն այն է, որ ժողովրդավարության գործող ինստիտուտները՝ ընտրական, կուսակցական, տեղական ինքնակառավարման և այլն, թեպետ ենթադրում են մարդկանց հավասար մասնակցություն և ռեսուրսների արդարացի բաշխում, սակայն իրականում անխուսափելիորեն դրսևորվում են տարբեր տիպի խտրականությունների տեսքով: Հայտնի է, օրինակ, որ հեղափոխությունից հետո նոր իշխանությունը, որպես կանոն, իրականացնում է սեփականության կամ արտոնությունների վերաբաշխում՝ հօգուտ նախընտրական շրջանում իր աջակիցների:

Եվս մեկ անիրականանալի սպասում վերաբերում է այն խնդրին, որ ժողովրդավարական համակարգերում որոշումների ընդունման վրա ազդում են բոլոր կամ հնարավորինս մեծ թվով մարդիկ, մինչդեռ իրականում դրա վրա ազդում են նույնիսկ ոչ թե իրական շահառուները, այլ, որպես կանոն, իշխանության մաս կազմող մասնագիտական խմբերը կամ սոցիալական ինստիտուտները: Այս առումով պետության ժողովրդավարացումը դեռ չի ենթադրում սոցիալական կյանքի ժողովրդավարացում:

Դրական ակնկալիքները թեպետ վկայում են ցանկությունների և իրականության միջև հակասությունների մասին, սակայն դրանք կարող են ոչ թե վերացնել ժողովրդավարությունը, այլ իշխող ռեժիմը դարձնել պակաս ժողովրդավարական, սակայն ավելի իրատեսական:

Այսպիսով, հասարակության ժողովրդավարացման գործընթացն ուղղված է հասարակարգի արդիականացմանը, ինչը ենթադրում է, մի կողմից, հասարակության ինքնուրույն կենսագործունեության ընթացքում ձևավորված հիմնախնդիրների լուծում, իսկ մյուս կողմից՝ արդիականացման առավել բարձր մակարդակի վրա գտնվող հասարակությունների փորձի ուսումնասիրություն և կիրառում: Միևնույն ժամանակ այս գործընթացը չի կարող արդյունավետ տեղի ունենալ միայն հասարակական կամ միայն պետական մակարդակում, այլ ենթադրում է իշխանության և հասարակության այնպիսի դիալեկտիկա, երբ երկուսն էլ ունեն սկզբունքային համաձայնություն արդիականացման նպատակի, դրա իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների և հետևանքների համար պատասխանատվություն կրելու վերաբերյալ: Փորձը ցույց է տալիս, որ ժողովրդավարացումն անխուսափելիորեն բախվում է ինչպես տվյալ հասարակությանը հատուկ տեղային, այնպես էլ ժողովրդավարությանը և դրա տարբեր ընկալումներին հատուկ հիմնախնդիրների հետ:

Բանալի բառեր – *ժողովրդավարություն, քաղաքացիական հասարակություն, ինքնակազմակերպում, քաղաքական մասնակցություն, հասարակության ժողովրդավարացում, ակտոր*

МОВСЕС ДЕМИРЧЯН – *Закономерности процесса демократизации общества.* – Статья посвящена процессу демократизации общества и связанным с ним проблемам, имеющмм как локальный, так и глобальный характер. Первые обусловлены особенностями культурно-исторического развития данного общества, вторые – международным опытом применения демократических норм и институтов, а также разными трактовками демократии. Демократизация не может касаться только общества или только государства; инициированная сверху или снизу, она в любом случае затрагивает все сферы общественной жизни, начиная с повседневных отношений и кончая политикой и государственным управлением. В качестве теоретических моделей кризиса или сложностей этого процесса разбираются концепции «дефицита демократии» и «ожиданий демократии», которые выявляют негативные закономерности социальной реальности и распространения демократических идей.

Ключевые слова: *демократия, гражданское общество, самоорганизация, политическое участие, демократизация общества, актор*

MOVSES DEMIRTSHYAN – *Regularities of the Process of Democratization of Society.* – The article analyzes the process of democratization of society and related problems, which are both local and global. The first are associated with the peculiarities of the cultural and historical development of this society, the second ones are associated with international experience in the application of democratic norms and institutions, as well as with different interpretations of democracy. It is argued that democratization cannot concern only society or only the state, but should take place either from the top to down or from the bottom to up, but in any case affecting all spheres of public life, starting with everyday relations and ending with politics and government. As theoretical models of crisis or problems of democratization, the concepts of “democracy deficit” and “expectations of democracy” are analyzed. These concepts reveal the negative patterns of the spread of democratic ideas and practices in the social reality.

Key words: *democracy, civil society, self-organisation, political participation, demorcatisation of society, actor*

Ներկայացվել է՝ 28.02.2019
Գրախոսվել է՝ 28.06.2019
Ընդունվել է տպագրության՝ 12.07.2019